



## Կ Ն Ո Ւ Ն Ք

Ը Ա Գ Ե Գ Ր Ա Կ Ա Ն Պ Ա Տ Կ Ե Ր

Ա.

**Գ**իւղական ամէն ծէսերի ու  
հանդէսների ներկայ էի ե-  
ղել ես, բայց մկրտութեան ծէս  
չէի տեսած։

Մեծ ուրախութիւն եղաւ իմ  
համար, երբ հիւրասէր տան տի-  
րուհիս—պառաւ եղսան հօրբոյրը  
սրտաբաց դիմաւորեց ինձ իւր  
յարկի տակ և ասաց։

—Բարձր ես եկել, հազար բա-  
րի, իմ գլխի, իմ աշքի վրայ, ա-  
մէն ժամանակ էդպէս ոտղ խէրով  
ներս դաս. դիո նոր ձիուդ գլու-  
խը ձեռից թողել էիր, դեռ դալուստդ ինձ նոր աւետիս  
տուին, որ հարսս մի թխլիկ ու դմբըսճիկ տղայ բերեց։

—Ռւրեմն, աշքդ լիյս, ասացի, բայց կնունքն իրար  
հետ ենք ուտում. երկու շաբաթ քո հիւրն իմ, մինչև



կնունիքը չուտեմ գրնովը դուրս անես, լուսամտիցը տուն  
կը մտնեմ:

— Համարձակուիր, զնալը մտրովդ անցկացրու ու  
հալդ տես, հուրն յաւիտենական հետդ խօսովը չեմ,  
սպառնաց Եղան հօրբոյրը, ութ օրից մի էնպէս շրխ-  
կալի հարկինք պիտի տամ, որ աշխարհքը զրմբար. տուն  
ու դուռս լիքը հիւրեր պիտի լինին, դու էլ բոլորի գըլ-  
խին բաղմած՝ վարդի պէս պիտի հուրհուատես ու ան-  
մտհական հոտ տաս:

— Մի պայմանաւ միայն, Եղան հօրքնյր, ասացի,  
որ ինչ խնդրելու լինիմ, չէ շատես, կատարես, խոստո-  
վանք լինի. խնդրածս մի քիչ ձեր սովորութեան հակա-  
ռակ ցանկութիւն է, բայց էս զլսից ասում եմ, եթէ  
խնդիրս մերժելու լինիս, դու էլ հուրն յաւիտենական իմ  
երեսս չես տեսնիլ:

— Խնդիր չը կայ, ցաւդ տանի Եղան հօրքուրդ,  
հոգիս ուղես, հանելու եմ, տալու, սրտումդ ինչ ունիս՝  
հրամանք արա:

— Խսկ եթէ ծննդկանն ամաշի, կամ ձեր տեղա-  
կան սովորութեան դէմ լինի, ինչ կանես:

— Ծննդկանին կը հրամայեմ, որ քեզ իր հարազատ  
եղքօր տեղն ընդունի, քեզանից ամօթ չըբաշի. պտափե-  
նական սովորութիւններից էլ ձեռներս կը լուանանք:

— Ուրեմն, իրաւունք տալիս ես՝ էսօրուանից մինչև  
կնունքը՝ քեզ հետ միասին ել ու մուտ անել ծննդկան  
քրոջս սենեակն ու ամէն սովորութիւններ ու ծէսեր աշ-  
քովս տեսնել:

— Ես քեզ միանդամ մինուճար Գէորգիս մեծ եղ-  
քայրն եմ ընդունել. իմ յարգեսոր հարսն էլ պարտական  
է իր տէզեր (տագերի) հրամանը հնազանդութիւնով կա-  
տարելու:

— Եթէ այդպէս է, մեծ հաճոյքով ութ օրից կննքա-  
ճաշխիդ զլիսին նստում եմ:

— Մի պայման էլ իմ կողմից, ասաց պառաւը՝ ինձ  
խօսք տուր, որ էս օրուանից մինչև կնունքը՝ օրական  
որրան առջնդ սուփրա բացուի՛ չը հակառակես, սիրով  
անուշ անես:

— Ուզում ես ինձ շատակերութիւն սովորցնել համ:

— Ոչ, ուզում եմ էս շաբաթուայ մէջ եկած բոլոր  
ծննդկաքերեղամների և ծննդկանի համար եփուելիք խա-  
վիծի համը տեսնես:

— Պատրաստ եմ:

— Ուրեմն մի ֆինջան արադ անուշ արա ու գնանք  
ծննդկանի մօտ, իմ եկած անուշ խաւիծից մասնաւո-  
րուի, Գիտես ինչպէս խաւիծ է, եղն երեսին ծլծլում է,  
մատներդ էլ հետք կուտես, Մինչեւ գոււ խաւիծն անուշ կա-  
նես, շաբունակեց պառաւը, ես կը պատրաստեմ առաջին  
ծննդկաքերեղանք, որ լինի տասը ձուից մի հաստ ձուա-  
ձեղ. նրանից իմ ձեռովկս կըկտրեմ, առաջին կտորը ծը-  
նընդկանի բերանը կըդնեմ, մնացածից ինչրան սիրտգ  
կուզի, մի խնայիլ երկիւղ մի անիլ, առաջին ու վերջին  
ձուաձեղը չի լինիլ, էս շաբաթ բարեկամների տներից  
էնքան կըբերեն, որ շներն ու կատուներն էլ կը լիթուեն  
(կըզգուեն):

Իսկ այս առաջին ծննդկաքերեղանքը քո պատրաստածը  
պիտի լինի. հօրաքոյր, այնպէս չէ:

— Հէ, բալա ջան, յուզոց հանեց Եղսանը, բաղդ բա-  
ժանողի աշքերը կուրանան, որ իմ խեղճ հարսին զրկել  
է մօրից. առաջին ծննդկաքերեղանքը ծննդկանի մօր ձեռ-  
ըով պիտի պատրաստուիլ իր հօրանց օջաղումը. բայց  
նաշար չոռոմս-մայր էլ եթէ ունենար, չէր կարող իր  
մօր ձեռի առաջին ձուաձեղին արժանի լինել. մէկ՝ որ  
հարսս օտար գիւղից է, մէկ էլ՝ որ էն սատանի սրոց

Ժամհար Կարապետի աղջիկն է, որ հիմի հարստացել ա-  
դայ է դառել:

Զգալով՝ որ պառաւի սրտի վէրքերը Կարապետին  
մտարերելով՝ վերանորոգուելու են, և ընդհատեցի խօ-  
սակցութիւնը և մի քառորդ ժամից, Եղանակ առաջնոր-  
դութեամբ՝ արդէն նորածնի սենեկումն էի:

Սյու օրն ուշադրութեան արժանի ոչինչ չը կար,  
գայեակը բարուրել էր (պատաժել) երեխային և դրել  
մօր կողը. ծննդիանը՝ նոր հանգոտացած ցաւերից՝ եր-  
կու հաստ վերմակի տակ ծածկուած էր. Առաջին անդամը  
նրան ուտացրին ալիւրից շաղախած իւղալից խաւիծից  
մի մեծ աման, մի զժուարամարս կիրակուր, որ առողջ  
ստամոքսի համար էլ ծանր էր, խաւիծից յետոյ կէս ձուա-  
զեղը բռնութեամբ երկար ու ձիգ օրհնութիւնների հետ  
փորն ածեցին. վրան էլ խմացրին տաք կոճով կամ զան-  
ջաֆիլով ու պղպեղով եփած ռուբով (լաղողի օշարակ)  
քաղցրացրած գինի, որ թէրմուն է կոչւում:

Սյու զրգուիչ խմիչքին եմ վերաբրում ես անմարսե-  
լի խւեղէնի ու խմորեղէնի անվնասութիւնը, չընայած որ  
սառն էր, բայց կրակի պէս այրում էր կոկորդս. մի քա-  
նի քաժակ մեծ հայճոյքով դատարկեցի:

## Բ.

—Երեխայի անունն ի՞նչ էր զրել, հարց տուի պառա-  
վին, երբ միւս առաւօտը տուն մտաւ և առաջարկեց ի՞նձ  
գնալ և նորամանուկի լողացնելուն ներկայ լինել:

—Վճյ, քուանամ ու կուրանամ ես, ձեռքով բերանը  
պինդ սեղմեց, իբրև զարմացական նշան պառաւը, մենք  
անհատատ ենք:

—Ընչնւ:

—Այ քեզ մատաղ, դու մնց քրիստոնեայ հս, որ չես  
հասկանում, թէ մինչև կանաչ մեռնն երեխի ճակատը

չըքսեն, նրան անուն չեն տալ, միթէ դու չգիտես, որ  
երեխէն մինչև կնքուիլը հայ չի, թուրք է, հարամ է.

— Հապա էլ ընչի ես եկել ինձ՝ կանչում երեխի լուա-  
նալը տեսնելու. նշանակում է դուք նորամանուկին բանի  
որ նա հարամ է, չըպիտի լուանաք.

— Ընչի, մենք վայրենի ենք, որ ութ օր երեխին ան-  
լուայ թողանք, նեղացաւ պառաւը, անըան կատուն. որ ան-  
լեզու անսառն է, նա էլ իր ձագերին լաստելով իստա-  
կում է, մենք մի կատուի չափ էլ չըկանք: Ճնած օրից  
մինչև կնունքը, որ սովորաբար ութ օր է բաշում, բա-  
ցատրեց պառաւը, օրն երկու անդամ առաւօտ, երեկոյ՝  
տատմէրն երեխին լողացնում է. միայն կնրուելուց յետոյ՝  
է, որ երեք օր երեխէն պիտի մեռնի մէջ մնայ. երեք  
օր որ անցկացաւ, նոր տատմէրը կըգայ, մեռնահան կա-  
նի, իր վարձը կստանայ ու կիրթայ:

— Քո ասածից ինչպէս է դուրս գալիս, որ մինչև մը-  
կրտելն երեխային համբուրել նմանապէս չի կարելի. հա-

— Ի՞նձրէկէ, անկնունը թուլքին պաշողը թուրք կը  
դառնայ, հաստատապէս գլուխը տմբացրեց պառաւը. երե-  
խին առաջինը պիտի պաշի ծննդկանը: Երբ որ ժամիցը  
կնրաւորը տէրտէրի ետևն ընկած, երեխէն գրկին, իւղա-  
բերի մոմերը ձեռքին վառած՝ կը բերի նորամանուկին  
ու լիքը մեռնիր կը դնի սանամօր գոգը. ծննդկանը ա-  
ռաջ իր պտղած քրիստոնէի բարուրը (խանձարուր) կը  
համբուրի, յետոյ կնքաւորի փէշը.... Վայ, ես կօրանամ,  
սթափուեց պառաւը, տատմէրը ձեռները կշտած՝ մեզ  
սպասում է, իսկ ես չանէս (ծնօտ) կախ եմ թողել ու  
հետդ զրուցի բռնուել. Էլ մի նստիլ, վեր կաց, գնանք,  
թէ չէ տատմէր Մային հիմի հանգահան եղաւ (գժուեց).

Եղան հօրբրոջ ենթադրութիւնն անհիմն չէր, իմ  
ներկայութիւնս էր, որ թէ զարմացրեց և թէ զսպեց  
դայեակի բարկութիւնը. նա արդէն պատրաստուել էր

գնալու։ Նա ձեզն առաւ նորամանուկին ու տաշտի մէջ ձեռքին խաղացնելով՝ ուշացնում էր զրի մէջ ընկղմելլու։— Ձէսդ քնզ քաշի, թուրբի լամհւկ, բարկանում էր նա լացող երեխայի վրայ, ի՞նչ ես վերփեր թոշում, մի թիշ էլ սպասի, մեր պարոն աղէն, թող իրաւունք տայ, յետոյ քեզ ջուրը կոխսեմ. հծ տեսնում ես, որ պատրաստում է ձեռք ծոցը տանելու։

Ես հասկացայ մանկաբարձի իմ հասցէին արած նը. կատողութիւնը, նրան պարզն էր հարկաւոր. ստացաւ ինձանից և սկսեց լողացնելլու։

— Լաւ է լաւ, շատ մի ճղճղալ, գոչեց դայեակը՝ նորամանուկին ուղղած իր խօսքերը, միտքդ հասկանում եմ, ուղղում ես թուրբութիւնից դուրս գալ ու հալալուիլ. սպասի մի քանի օր, կարժանանաս Լուսաւորչի կանաչ մեռնին. ամէնքս էլ կը հալալունք ու հալալ հաց կռւտենք<sup>1)</sup>։

Մինչ դայեակն իւր գործը կը վերջացնէր, մանկանը խանձարուրների մէջ կը պատատէր ու մօր կողքը կը դնէր, տան վերի անկիւնում արդէն սփոռցը պատրաստուեց ու մի քանի տեսակ համեղ կերակրներ վրան շարուեցին. Տատմէրը հրաւէրբի չսպասեց, նա շտապով մօտեցաւ սփոռցին, իւրաքանչիւրից մի կտոր կտրեց և շտապ շտապ կերաւ։

— Ներողութիւն անրադարավարութիւնիս համար, պարոն աղայ ջան. արդարացաւ դայեակը. ոտիս տակին կրակ է վառւում, հինգ տեղ ծննդկան ունիմ, երկու տեղ ցաւող ու. նիմ, բոլորն ինձ են սպասում. հէնց իմանաս տնաշշէններն իրար իմաց են տուել ու էնպէս խաղս եղել ու տատմէր Մայինի վզին իրանց բնոր բարձել... Ոչի՞նչ, թող էդպէս

<sup>1)</sup> Մինչև մկրտութիւնը տնեցիք բոլորեքեան համար ևում են անսուրբ. իսկ ծննդկանի կատարելապէս սրբութիւնը 40 օրից յետոյ է. նա բառասունք է պահում։

թեթև բհոներն Սստուած շատացնի, Մայինի կռներու, մը դեռ ոյժ կայ, կը տանի...

— Եղան հօրքներ, ասացի ես դայեակի գնալուց յետոյ՝ ծալապատիկ սփռոցի զլսին բաղմէլով, էս քանի՞ հատ ձուազեղ ու հալւէք ես պատրաստել, ըանի՞ հաւ ես մորթոտել. ում համար է, էսքանն ով պիտի ուտի,

— Ճէն կենան ազիզ բարեկամների շէն ու լի օջալ-ները, պատասխանեց պառաւը, էդ բոլորն էսօրուայ զըր-կուած ծննդկարերեղաններն են. ծննդկանը պիտի քաղցր կերակուրներ ուտի, որ երէխէն քաղցրաբնութիւնի լինի: Բարեկամները գիտեն, որ ծննդկանի տէրը խառնուած կը լինի, ժամանակ չի ունենալ ծննդկանի համար քաղցրեղէններ պատրաստելու, իրանք են նեղութիւն քաշում. Է՞ն, աշխարհս հացափոխ է, բալա ջան, նրանք մեղ կը զըրկեն, մենք էլ իրանց կը դրկենք. Էն քիչը՝ տարեկան երեսուն ծննդկարերեղան իմ տանիցն է գուրս գնում.

## Պ.

Եօթն օր շարունակ կերածս ծննդկարերեղաններ էին ու խմածս թերմուն:

— Ուժներորդ օրուայ նախընթաց երեկոյին՝ պառաւ Եղանն եկաւ մօտս և յայտնեց, որ վաղը կնունք է:

— Ճէնց հիմի տատմօր ձեռքով ուղարկեցի, ասաց նա, կնքաւրենց տունը մի սինի (ափսէ) մրգեղէն, մի գլուխ Սպահանուղանդ (շարար) և մի գաւ քո հաւանած գինի: Մային գնաց կնքաւրին իմաց տալու, որ էկուց չնորհ ըերի երեխին կնքելու: Քանի որ մեր տունը Աստծու քաղցր պարգև է մտել, բացատրեց պառաւը, մենք էլ պիտի ոչինչ շանենք առանց քաղցրի: Ափսնս, որ իմ բաղցր օջախն էս օր մի քիչ դառնացաւ, հառաչելով աւե-

լացրեց պառաւը և աչքերից հոսած արտասուբը թևով սրբեց:

— Ինչ է պատահել, հարցրի ես:

— Եզուց բարի աշքովդ կըտեղնես: Էս օր մի խմանալ, որ զիշերս հանգիստ քանդ չըկտրուի:

— Ալսար ինչ կայ, հետաքրքրուեցի ես:

— Ել որանից ուել ինչ անբաղդութիւն պիտի լինի. իմ գետինը մտնելու խնամին՝ հարսիս ոև օձ հէրը մի մեծ որձ ոչխար առել է ու եկել աղջկանը տեսութիւնի, գլխովը զիտչի, պողերն աչքերը մտնի, կուրացնի. — խնամի ջան, ասում է, մեր տեղը հեռու էր, որ աղջկանս առաջին ծննդկաքերեղանը զրկէի, փոխարէնը հիմի եմ բերել: Հնալս իրա գլխին. տեսէք, տեսէք՝ հարուստ եմ մոռացել է իր ժամհարութիւնը, քիսէն տուզել է, մի բեռը մեղրով թխուածքներ, տապակած ձկներ, խաշած հաւեր ու ես ինչ գիտեմ, ինչ բար ու քացախներ է բերել. Թող տանի աշըը կոխի, ոչ մի պատառ հարսիս բերանը կը-գնեմ, ոչ սիրեկաններիս կուտացնեմ. կածեմ իր առջնը, թող լափի. մնացածն էլ շների առաջը կըլցնեմ, հապաչէ, ես իմ անեցիրանցն անհաւատի կերակուր կուտացնեմ:

— Եթէ էղպէս էր, ընչի տղայիդ համար անհաւատի աղջիկ ուղեցիր, հարց տուի ես:

— Հապա իմ մեռնիլս էդ չի, հեկեկաց պառաւը, սեերես մնայ Գէորգս, թողեց մեր հող ու ջրի կարմրաթուշիկ աղջիկներին, գնաց Սստծու երեսից ընկած մի գիւղից կնիկ բերեց: Դեռ, փառք իմ ստեղծողին, որ հարսս իր գետինը վէր խորտակուելու հօրը չի քաշել, գայլից գառն է ծնել. ինքը հարամ սերմից առաջ եկած ու էսպէս պարկեշտ, յարգեոր, խոնարհ, հնազանդ, մեծ ու պստկի պատիւ իմացող, հալալ կաթնակեր է մեզ բաղդ եկել: Լոյս կտրուի սրա մօր հոգին, որ իր անիծուած մարդի տանը չեղած ժամանակ, թագուն հայ տէրտէր է կան-

շել ու իր հարամը հալալել, Լուսաւորչու լոյս կանաչ մեռն է բսել տուել իր աղջկայ ճակատը:

— Ճատ մուլժը մուլժը բաներ ես պատմում, Եղսան հօրքուր, անիծուած անհաւատ չեմ հասկանում, եղելութեանցն իբրև անտեղեակ պատրուակուեցի ես, խնդրեմ պարզ խօսես:

— Ի՞նչ պարզեմ, այ որդի, հայերէն եմ ասում, հօժուրքիրէն չեմ բլբլացնում. ախար, էս մեր սատանէքանց բաժին խնամի Կարապետը, հօ հայ չի. ինքն էլ իրանց գիւղի մի բաժինն էլ անաստուած են: Էն սուրբ Լուսաւորչին եմ յանձնել, վշտալից բացականչեց Եղսանը, որ նա կամ իր մոլորած ոչխարներին քչի, բերի, նորից իր հօտի մէջ խառնի, միացնի և կամ իմ խնամուգիւղի կեսի զլսին կրակ թափի, Սողոմ Գոմոր շինի, որ տեղն էլ չերեայ. Բնչ անեմ, բաց աշքով տեսնելու արժան կըլինիմ որ Լուսաւորիչ պավը իմնոգովուած խնամուն քրքրի, ծակծկոտի, մարմինը կերցաւ րցէ, խրխստացնի, կռնդացնի, շոնթացնի, Տրդատ թագաւորի պէս խող շինի, որ վերջը՝ էդ վայրենի խոզը՝ տոխտոխ անելով, չորեքթաթդայ, գլուխը գնի՝ Լուսաւորչի լոյս տաճարի դրան շեմքին դարձ գայ, զղայ, իր հօգուն ու մարմնին փրկութիւն ստանայ, մենք էլ ուրախանանք....

— Վերջապէս, Եղսան հօրքներ, ընդհատեցի ես. խնամիդ վատ է, թող իւր համար մնայ. դու ուրախ եղիր, որ հարսդ, ինչզիս ասում ես, լաւն է:

— Հարսիս կիսին էլ չեմ արժան, սիրելիան եղբայրս, պատասխանեց պառաւը, բայց, ախար, դու ոչինչ շրգիտես, մենք երկնքի տակին, երկրի երեսին խաղը ու խայ. տառակ ենք եղել, մի մատը մեղր ենք դառել մեր գիւղի մէջ, հնացաւ, անցկացաւ, բայց երկու տարի սրանից յառաջ՝ մեր գիւղի երեխէն էլ մեր վրայ թքում էր, մեզ կրակն էր դնում, էրում, թէ վնացիք ֆարսասոնի աղ.

զիկ ուղեցիք, երեսւմ է՝ դուք էլ ֆարմասոն դառնալու միտք ունիք:

— Ո՞սց թէ ֆարմասոն, դարձեալ անդէտ ձեացայ ես:

— Եղ չեմ գլխիս վայ տալիս, ձախ ձեռքով գլուխը ծեծեց նղանը. ախար, էդ իմ գժուխըի բաժին խնամին ինքը ֆարմասոն է գառել, իրանց գիւղի մի բաժինն էլ ֆարմասոն է շինել: Էդ քիչ է՝ ասում են՝ ինքն էլ անմիրուք, անֆարաջայ, անձեռնադրուիլ ու մեռնուիլ տէր. տէրութիւն է անում, կնուք, թաղում է կատարում, մի աղջկայ կոնից բռնում, մի տղի է տալիս, թէ էսօրուանից դուք մարդ ու կնիկ էք. ախար, քեզ եմ հարցնում, էս Սստուած կը վերցնի:

— Ճետաքրրական է այդ մարդի հետ ծանօթանալը, նղան հօրքնը, գնա դրան ինձ մօտ ուղարկիր, տեսննք՝ ինչ բարի պտուղ է:

Սատանէն տեսնի նրա երեսը, ափսոս չես. էս զիշեր սիրտդ հանդիսա քնիր, էկուց պատարազից յետոյ նրա կուրանալու աշքերը լաւ տնտղի, տես, թէ մնց են սատանէքը միջին պտիտ պտիտ անում. բայց հիմիկուց քեզ զգուշացնում եմ, չը լինի՝ թէ քեզ մոլորեցնի, օձի լեզու կայ քերանումը, էնպէս քաղցր խօսքեր կասի, որ հայիլ մայիլ կը մնաս, բոլորը՝ գրքերիցն է խօսում. երկու խօսքից յետոյ՝ սուրբ գիրք, սուրբ գիրք է անում, չը գիտեմ՝ էդ նր սուրբ գիրքն է, որ նրան իր սրբութիւնն ու զօրութիւնը չի ցոյց տալիս, գունստ ու կծիկ չի ածում, անդամնալոյժ, գետնին քաշ չի տալիս: Է՞հ, ես ի՞նչ գիտեմ, սիրելիս, կարելի է մի մեծ անէծր կար մեր տան գլխին, որ էդ անհոգի, անխղճմանքին մեզ թուշ արեց, հանդիպեցրեց:

— Զի կարելի պատմել, թէ ի՞նչպէս պատահեց այդ:

— Ի՞նչ ասեմ, յսգւոց հանեց պառաւը, երեխ, Գէորգիս ճակատին էդպէս էր գրուած: Երեխէս մի անգամ

արագ ծախելու տեղից գալիս՝ նրանց զիւղի մօտ պատահում է մի աղջկայ, որ կուժն ուսին՝ ջուր էր բերում. Գէորգիս աշըն ընկնին ու հաւանիլը մէկ է լինում, ինչ անի մեր դարմանի տակի ջուրը (խորամանկը), որ ըէֆդ վայ. կամանց՝ ձեռից մտրակը վեր է գցում:

— Աղջի, աղջի, ապրիս, յետ է թերում ու ձէն տալիս Գէորգս, մտրակս ցած ընկաւ, ոտս մի բիշ ցաւ է տուել, իջնել շեմ կարող, արի, բարձրացրու ինձ տուր. յետոյ էլ՝ թէ՛ քեզ մի սիրուն նշանած, ծարաւ պապակ. ուում եմ, եթէ քո մուրազը կը սիրես, կուժդ բերանիս դէմ արա, խմացրու, քեզ վարձք է. Միամիտ երիխէն, որ իմ յարգնոր հարսս է լինում, ինչ կը մտածէր, թէ մի զարիբ տղայի մտքումն էդ րոպէին սատանէք են պար գալիս, համ մտրակն է տալիս, համ ջուր է խմացնում. Անամօթ դու Գէնրդ, ջուրդ խմի ու վրայ պրծիր ալվան ու կարմիր աղջկայ՝ առանց էն է՛ ամօթխածութիւնից վարդ կտրած թուշը պաշլիր ու ձեռի բիլակը (գաստակ) պինդ բռնիր. Կուռը թափէ թափէ տալիս խեղճ չոռումս, մրմնջում, մղկտում է, աղաչում է, որ իրան բաց թողայ, բայց մեր սևերեսին, երեխ, սէրն է լիզու տալիս.— Աղջիկ, ասում է, ես ֆլան գիւղացի ֆլանն եմ (այս ինչ գիւղացի այս ոքն եմ), ինքս մեր գիւղի հարուստներից մէկի մինուճար տղէն եմ ու ազապների մէջ ազապքաշին. Էս մի ամիս է՝ դու ամէն գիշեր ինձ երազ ես գալիս, ջուր ես խմացնում ու ասում. իմը դու ես, արի ինձ տար, ես շեմ հարցնում, թէ ով ես, ինչ աղջիկ ես. Հիմի եկել եմ քեզ տանելու. եթէ ինձ հաւանում ես, եթէ գիտես, որ հէրդ քեզ ինձ կը տայ՝ ասա՝ գնամ, օրինա ուր խնամխօս դրկեմ, քեզ ուզի, թէ չէ, լաւ իմացիր, որ քո եւախէն (օձիք) ձեռից թողնելու շեմ. թէկուզ հայրդ մկան ծակումն էլ քեզ թագցնելու լինի, ես որսկան կատու եմ դառնալու, չանգերովս ծակը բրբելու ու

քեզ դուրս քաշելու. հաստատ քեզ ասում եմ՝ դու իմն ես, ես բննը:

— Որ դու էղակէս ճշմարտախօս տղայ ես, ասում է ու չի ամանջում էս իմ գլուխը կախ հարսը, ես իմ ցաւերս առաջիդ բաց անեմ, իմացիր, որ իմ հերս էս գիւղի առաջին մարդն է, ինքը համ հասարակութեան տանուտէրն է, համ ֆարմասոնների տէրտէրը ու հայերին էլ չի սիրում. նա ուզում է ինձ տալ մի ֆարմասոնի տղի, որ մօա չընաս է. մէկ՝ որ հալալ հօրեղորս թոռն է, հայի օրէնքով անկարելի է, մէկէլ՝ որ սիրտս չի բաշում, ես չեմ սիրում հօրս հաւանած, ճպոռտ ու տղաթեած Մացոյին. ինձ համար հայի նախորչու տղի ոտը ֆարմասոնի գլխաւորի գլխից աւել է: Պիտի իմանաս, որ իմ բոլոր բոյր ու եղբայրները ֆարմասոն են, հէրս իր ձեռովն է նրանց անմեռոն կնքել, բայց լոյս կտրուի մօրը հոգին. նա թագուն տէրտէր է կանչել, ինձ մկրտիլ տուել, ինձ հայ պահել, հայ մննդել, հայ մեծացրել ու մեռնելուս էլ վրիս պարտը է դրել, որ ֆարմասոնի՛ չըգնամ: Հիմի ես տեսնում եմ, որ Աստուած մօրս արժանաւոր աղօթրը լսել է ու իմ արտասուներին խնայել, քեզ իմ գլխին տէր է զրկել: Թէ կուզե՞ն հէնց էս բոպէին ինձ ձիուդ գաւակն առ, տար, որտեղ քո սիրտը կըցանկանայ, մի հայի ժամում պսակիր ու տունդ տար:

Էս իմ պարոն Գէորգիս ոտը, ծաղրելով պատմեց պառաւը, ձեռաց լաւանում է, ծտի պէս ցած է թոչում ձիուց ու ոնց որ ուրուրը հաւի թխիկ ու փափլիկ ձագին ճանկերի մէջն է առնում ու սլալով երկինք բարձրանում, էղակէս էլ մեր ուրուրը երկու թեի մէջն է առնում սիրուն հարսնացուիս ու մէկ, երկու, երեք՝ երեսահարրը լիզում, լպսում, թոչում թամբի մէջ, նշանածացուին գաւակն առնում ու ձիու գլուխը բաց թողում:

— Եւ ուղիղ քերում ձեր գիւղը, ընդհատեցի ես:

— Դու ոչ մեռնիս, պատասխանեց Եղան հօրքոյրը. գնում է ուղիղ Փամբակ:

— Պատճառ:

— Էնտեղ մենք մի բարեկամ տէրտէր ունինք, պատասխանեց պառաւը, բահանէն ուրախ ուրախ պսակում է դրանց, մի շարաթի իր տանը պահում նորահարս նորափեսին ու շարթի զլսին ինքը, իր տիրուհին, իր տղէն, մի քանի հոգի իրանց գիւղից ձիաւրներ հետն առած՝ մեղ համար հարսն է բերում:

Ճատ էլ ոտ ու զլուխներս ծեծեցինք, բայց ինչ կօգտէր, եղածն եղած էր, ընկել էինք՝ պիտի քաշէինք. ևս աւելի՝ որ մէջ տեղը տէրտէր կար:

— Ճատ էլ լաւ էր արել, հաւանութիւն տուի ես. ։

— Դու կարծում ես՝ մեր չնորհքն էր. փառաւորին տէր Մարտիրոսը, խելքը ծով է, միայն Փամբակումը հօշի, էս մեր հողի բոլոր տէրտէրներիցը համ խելօր է, համ գիտնական է, համ էլ սուրբ է. մեռելը դնես նաշի (գագաղի) մէջ, ուսես, տանես դուռը, տէր Մարտիրոսը դեռ զլխին նարեկ կըկարդայ, յետոյ իր Սովոմոնի զրբի միջից երկու զալամ եղնդի վրայ կըպտտացնի ու կասի. առ գնա: Հաստատ իմացի, որ բոսէ չի բաշիլ, մեռելը կըկենդանանայ:

— Զի կարելի, Եղան հօրքնյր, հեղնեցի ես, մեռելներին թողենք հանգիստ քնեն ու տէրտէրիդ խնդրենք՝ կենդանիների վրայ իր հրաշագործութիւնները կատարել:

— Վրէս ծիծաղում ես հա, հասկացաւ պառան և վրայ բերեց. ոէ, կարգ է, պատմելիս մի քիչ կըծաղկացնեն, որ լսողի ականջին զգուանը չըդառնայ. ես մեռել ասացի, դու հիւանդ ընդունիր. Դրանք թնդ, շիտակն էս է, որ տէր Մարտիրոսն իր դրբացութիւնով մեր երկրում պատիւ ունի, մեծ ու պստկի մօտ մի խօսքն երկու չի լինում, ամէնքն էլ նրա հրամանը զլխի վրայ են կատա-

րում ու մենք ինչպէս կըհամարձակուէինք տէր Մարտր-  
րոսին չէ ասել ու նրա պսակած հարս ու թագաւորին  
տուն չընդունիլ:

— Անկարծիք:

— Զեղ համար մի ալմաստի անդին ակնով ոսկէ  
մատանիք եմ բերել՝ ցիսի միջից հանած, ասաց մեղ տէր  
Մարտիրոսը, ցիսոտ է, ցիլուը լուա, մատդ դիր, թող  
ճրագի պէս Փռփոայ. աշխարհիք բերանն էլ վրէն բաց  
մնայ. Դու ի՞նչ կասէիր էս խօսրին, դարձաւ ինձ պա-  
ռաւը:

— Ես կը պատասխանէի, որ գոհարը միշտ գոհար  
է, նա իւր գինն ու փայն ունի, ցեխից, թէ ոսկի տը-  
փից լինի հանած, և դուք շատ խելացի էք գտնուել քա-  
հանային լոելով:

— Հէնց զիտես միայն մենք լսեցինք, տէրտէրն եթէ  
չըլինէր, էսօր դու կըգայիք ու եղսան հօրբուրիկ գերեղ-  
մանն օրհնել կըտայիք. Քեզ յայտնի է, որ վատ խարարի  
ձէնը շուտ վեր կըլինի, դեռ տէրտէրն իր մարդկերան-  
ցով ձիանոնց գլուխները ձեռից չէին թողել, որ ողջ զիւ-  
դականին յայտնի եղաւ, թէ եղսանի տղէն ֆարմասօն Կա-  
րապետի աղջկանը փախցրել, բերել է. Ես մի ժամ ա-  
սեմ, դու կէս ժամ՝ չը քաշեց, հասարակութիւնը՝ մի մին  
շուն թակելու գաւաղան ձեռներին՝ մեր դուռը կոխեց: —  
«Ո՞նց թէ դուք մեր Լուսաւորչի անարատ երինջների մէջ  
գայլ էք ուղում լսանել, գոռում է ամեն բերան, դուք  
մեր պարկեշտ հարս ու աղջկների ձեռովն էք ուղում  
մեր հալալ օջաղները հարամել, ձեր միտքն էս է, որ մեր  
բոլոր երեխէքը հայութիւնը մոռանան ֆարմասօն մե-  
ծանան:»

— Խելացի կարծիք, առողջ դատողութիւն, ամենայն  
բարօրութիւն և դժբաղդութիւն մայրերի շնորհիւ կար-  
մատանայ նոր սերնդի մէջ, բացականչեցի ես:

— Ո՞ւմ էին ասում, աղիկ եղբայրս, շարունակեց Եղանը, ով էր լսում գիւղականների հարայ-հրոցը, մկան ծակը հարիւր թումանով էինք առել, զլուխներս ներս խցկել, տաղ արել ու սասանել. կարճով էինք լոյս աշխարհ դուրս դալ, բոլոր տնեցիրանցս դիմակ կը շինէին, գետնի երեսին կը փռէին: Փառաւորին, կարգին հաստատ կինայ տէր Մարտիրոսը, ճակատը բարձր բռնեց, գաւազանը ձեռն առաւ, միրուրը թի տուած՝ (լայն սանրած) դուրս դնաց ու բարձր ձայնով բարի ողջոյն տուեց:

— Օրհնեա ի տէր, բարի հաղար բարի, գոռացին բոլորը, ու ոնց որ մի թրով բոլորի զլուխը թուցնես, վէր ածես, ու ոչ մէկիցը մի ձէն ու ծպտուն վեր շրլինի՝ էդպէս՝ ողջ հասարակութիւնը լլկուեց, պապանձուեց, թէ ինչ խօսեց, ինչպէս ամէնքի սիրտը շահեց տէր Մարտիրոս՝ իրա զործն էր, միայն թէ իսկոյն տանուտէրի հրամանով էլը (համայնքը) ցրւում է ու 10 – 15 պատուաւոր մարդիկ՝ տէրտէրի հետ՝ տուն են գալիս, ինձ դուրս կանչում. (ախար, ոչ բարով, լոի բաժին գլխիս տիրոջից յետոյ՝ տան զլուխը զլխամեռս եմ) ու աշքալոյս տալիս, չնորհաւորում:

— Կեցցեն, բացականչեցի ես:

— Վերջը՝ տէր Մարտիրոսի խորհրդով՝ իրանը՝ մեր գիւղի իշխաններն իրանց միջից՝ 10 խելքի ու պատուի տէր մարդ ընտրեցին, ձիաւորեցին ու զրկեցին մեր գլւխամեռ խնամի Կարապետի մօտ համ խնամխօս, համ հարսանիքի համեցքաւոր՝ (հրաւիրակ):

Սատանի խելք ունի անիծածը, բոլորին սիրով ընդունում է, լաւ պատիւ է տալիս ու իրանց գիւղիցը մի տէրտէր ու տասն աշխարհական, օրինաւոր իշխաններ իր կողմից ձիաւորում է, մի բեռն էլ կարգին, քո հաւանած բաժինը է կապում ու ճանապարհ գնում: Հետն էլ՝ բահանի բերնով իր կողմից հաղար օրհնանքներ է ա-

պլուպարում իր սիրելի փէսին ու աղջկանը:

— Իսկ ինքը, հարցրի ես:

— Ինքը չի գալիս և շատ խելօք է անում:

— Հատ զնուր, ըստ իս, գիւղի հասարակութեան հետ հաշտուելու ամենայարմար ժամանակն էր, կարծիք յայտնեցի ես:

— Ամէնքն էլ քեզ պէս էին մտածում, պատասխանեց պառաւը, բայց բոլորն էլ սխալ էին ու գետինը մտնելուն ամէնքիցն էլ խելօք դուրս եկաւ. Մի ամորից յետոյ՝ մարդ է դրկում, Գէորգիս կանչում իր մօտ, 100 մանէթ փող տալիս, մի շաղ (գեր) մսալի ստերչ (ամուլ մնացած) կով էլ առաջն անում, դրկում ու հրամայում, որ մեր յիբու (այգի) ափումը պատրաստութիւն տեսնի, իր կողմից մեր դիւլականներին տնով, տեղով կիւրակի օրուան համար հարսանիք հրաւիրի: Գէորգս ամէն ինչ պատրաստեց, դափ ու զուռնէն տարաւ մեր հնձանի կը-տերը կանգնացրեց ու հէնց որ դաշտի կողմից ձիաւոր. ներն երեացին, դափաշին կոմբալն ու կոպալը շարժեց, զուռնաշին ծուանն իստակեց, զլեց ու մեր խնամիքը ձի խաղացնելով, եալլա կանչելով, կարմիր աղլուխների պալ. տացնելով եկան, ձիանոնցից շցած թռան ու ծանօթ. անծանօթ՝ մերոնց բոլորի հետ պուշտի արին, բարեկա. մացան, մի չև իրիկուն կեր ու խումը սաստկացրին ու մութը դեռ գետինը շառած՝ սիրով բաժանուեցին:

Հիանալի, կեցցէ խնամիդ:

— Ծնիծուի ոչ նա, վրայ բերեց պառաւը, սլիտի տեսնէիր. թէ մնց մօտեցաւ ինձ, սիլի բիլի անելով (փա. ղարշանքով) աշրալիս խօսաց, կոացաւ ծիծս պաշեց ու ասեց, որ ինքը մեր կիսին էլ արժան չէր, Ըստծու քաղցր աշքն է եղել, որ Գէորգիս ու Հոռոմին դաշտի մէջ տեղն իրար հանդիպացրել է:

Իսկ դու հօրքնյը, խնամուդ ինչ տեղը համբու-

բեցիր, կատակ արի հս:

— Վայ, ամօթխածութիւնից շառադունեց, ձեռքով երեսը մեղմիկ չանգուեց ու պատասխանեց պառաւը, հապա չէ ու պիտի վրայ պրծնէի, մի ոտս գերեզմանի գրանը, պառաւ տեղովս նրա լպսուած թշերն ու գող կատովի աշքերը պաշազորէի. հողս նրա գրսդի տարած երեսին, վրէն թքիլ էլ չէի ուզիլ. ինչ արած՝ ասում է. «բերանս կապողն իմ պաշտած խաչն է», Գէորգիս սիրուն՝ աշքերս պինդ հուպ տուի ու քնթկալով փակած պլուծներս քսեցի նրա ճակատին:


— Դէ հասկացանք, ջահէլութիւնդ միտդ ես բերել, խնամութեան չըհասութիւնը մոռացել ես ու պարօն Կարապետի հետ փաթաթուել ու համբուրուել, անհւշ, մարսական, կատակարանեցի ես:

— Վայ, քո մեղացը տէր կենամ, Գէորգիս ու քո արենվն եմ երդում, որ զլխամեռ Կարապետին ինչպէս քայլն եղրօն եմ մօտեցել, կատակս լուրջ ընդունելով կծու կծու արդարանում էր միամիտ եղսան հօրքոյրը:

— Երդմնատրաք մի լինիր, եղսան հօրքոյր, հանաք եմ անում. էլ այսուհետև քո ինչ սիրաբանութիւններ անելու ժամանակն է, միամտացրի ես. Այդ ամէնը թողնենք, դու ինձ այս ասա, երբ ձեր մէջ արդէն հաշտութիւն կայացել է, ընչնտ ես ուրեմն խնամուդ այդպէս ատում ու վատարանում, հարց տուի պառաւին:

— Ասենք՝ հիմի էլ աւագուայ խորթութիւնը չը կայ, հիմի ոչ միայն մեր գիւղը, բոլոր հայ գիւղերն, ասում են, մի տեսակ սառն աշքով են մտիկ տալիս եղած կատարուած դրութիւնին, բայց խնամիս մեր գիւղը գալում՝ միշտ քաշւամ է գիւղացիներից. Դէ, լաւ էլ անում է, նստած, մոխրի տակն եղած կրակի վրայ ընչին զուր տեղը ձէթ լցնես, բոց անես. ինքն էլ լաւ գիտի, որ մի էնպէս վէրք է տուել Լուսաւորչի լոյս հաւատին, որ թէ-

Խորսօն Ը.



կուզ խոյն առողջանայ՝ խոցի տեղը յաւիտեան մաշուր  
(յայտնի) կը լինի. Մինչև էսօր էլ մեր գիւղացիք խնա-  
մուս հանդիպելիս հանարներով ու խաղերով (այլաբա-  
նօրէն) քարեր են շպրառում. այ, էզուց՝ կննքաճաշին բո-  
ականջավդ կը լսեա. Էսօր հերիք է ինչքան ձաւար արի  
(շաղակատել), զլուխոդ տարայ. մհացածն էլ ուրիշ ժա-  
մանակ. բոլորովին մտքից թռել է, թէ տանն ինձ սպա-  
սսպներ կան. ախար, մեր բարնկամներից մի քանի ջահէլ  
քաջ տղէք եմ կանչել, որ էզուցուան անելիք դործերն  
իրանց յանձնեմ. մի երկուսին հէնց էս իրիկոն պիտի  
դրկեմ մօտիկ հարեանների ու բարեկամների տներից ա-  
ման չաման, պինձկարգ, սուփրա—դդաներ ու փոռւածք  
հաւաքել տամ. էզուց էլ նրանք պիտի լինեն ժամանակին  
կնունք հրատիրազը, սուփրի վրայ սպասաւորութիւն ա-  
նողը ու ամէն ծառայութիւն կատարողը, մենք զլուխնե-  
րըս կորցրած կը լինինք, քիթ սրբելու ժամանակ չենք  
ունենալ. Էն էլ մեծ բան է, եթէ կարսպանանք եկող հիւ-  
րերին ներս համեցէք անել, գնացողների էլ չնորհակա-  
լութիւնն ընդունել:

**Պառաւը տեղիցը վեր կացաւ.**

— Իսկ դմտ ընչու չես կարողանում վերջ տալ սրտումդ  
հաւաքուած մաղձին, այս պատասխանն էլ կարճօրէն  
տուր, Եղսան հօր քնյը, և մեր խօսակցութեան ծայրին  
կապ տանք, ստիպեցի հո.

— Դրան հրկու խօսրով կը պատասխանեմ, ցուցամատն  
ու միջամատը զուգելով բարձրացրեց ղառաւը. շատ էլ  
աշքիս լոյսն ես, բայց որ հարազատ չես, խորթ ես—  
փորթես, ու մի բան՝ որ խորթ ու փորթ է, հարթ հա-  
ւասարուել չի կարող, չէ, չէ ու չէ:

**Պառաւն յուսահատօրէն ձեռքը թափ տուեց ու  
շտապաւ հեռացաւ.**

## Պ.

Միս օրն Եղանակնց տանը կնունը էր, նորամանուլընի անդրանիկին էր, օրը հանդիսաւոր էր, պատարագով էին երեխային մկրտելու:

Պատարադի առաջին զանդակից՝ ես եկեղեցումն էի, կանգնած էի ուղիղ դրան մօտ, երեցփոխի կողքին։ Դիպուածական չէր իմ այդ տեղ կանգնելը. աշքս շարունակ դրան կրունկի վրայ էր, ժամի գուռը բացողն՝ առաջինն իմ աշքին պիտի ընկնէր. Եւ իրաւ, բոլոր ժամաւորին տեսայ ու սպասածս անձը ներս չը մտաւ. Ես սպասում էի Աստուծոյ տանը, սուրբ պատարագին՝ ներկայ տեսնելու հօրոյր Եղանակի խնամի Կարապետին և շարժանացայ։

Թէ ինչպէս էին ժամ ասում, շատ խստավահանջ չը լինինք. «Են վաղ էր, որ էշը կաղ էր», մի օր կար տասնաւոր, բաղցրածայն մանուկներ՝ ժամաշապիկները հագած շուրջ էին բոլորում իրենց ձայնեղ և կարգապահ ուսուցչին և հրեշտակային երգասացութեամբ զարդարում էին սուրբ տաճարը. իսկ այդ օրը՝ հնուց մեացած, սաղմոս—ժամագրքով զլուխներն ուռցրած, ծերունի, տիրացու պատուանուն կրող երկու գեղջուկներ էին դպիր կանգնել. Նրանցից մէկն անժամանակ այրիանալու և միւսը ոգելից խմիչքներին սիրահար լինելու առթիւ էին խրեանց ժամանակին փիլոն ծածկելուց զրկուել. Այժմ, դրանք էին իրանց աններդաշնակ խռպոտ ձայնով ունկնդիրների ջերմեռանդութիւնը մարեցնում և ականջների ժմբուկներն անհանդիստ անում։

Պատարադի ժամանակ՝ հետաքրքրութեան արժանին դարձեալ նորամանուկն էր ինձ համար։

Բերեց տատմէր Մային երեխային ժամկոչի հետ եկեղեցի և ներս տարաւ կանանց դասը. Այդ տեղ եկաւ ժամումը վաղուց սպասող լինքահայրը, գիրկն առաւ երե-

խային և քահանայի առաջնորդութեամբ՝ դրսեի կարգը պերջացնելուց յետոյ՝ մօտեցաւ սուրբ աւագանին։ Մըկրտութիւնից յետոյ՝ քահանան նորածնին տուեց ժամկոչին խանձարելու և վերադարձնելու։ Այդպէս էլ լինելու էր դպյակակն՝ իբրև կինարմատ՝ իրաւոնք չունի, ըստ աւանդութեան, աւազանին մօտենալու։

Քահանան նոր քրիստոնէին սեղան հանելուց և հագորդելուց յետոյ՝ տուեց կնքահօր ձեռքը և հրամայեց աւազանի մօտ սպասել մինչև պատարագի վերջը։

Կնքահօր կողմից բերուած էր եկեղեցի նարօտացու, կնկուղացու և սաւան, նարօտը սպիտակ և կարմիր մետաքսէ դերձաններ էին, որ քահանան ոլորեց, միացրեց և իւր ձեռքով անցկացրեց մկրտուածի սպառանոցը ու ժայրերը մոմով ամրացրեց։ Կնկուղն երկու դազաշափ նուրբ, ճերմակ կտաւ էր, ծայրը վեղարանման կարուած, որի մէջ պատաժեց քահանան նոր մկրտեալին։ Խսկ սաւանը երեք զաղաշափ կարմիր դանաւուզ կոչուած բեհեղ էր՝ ծննդկան զանամօրը շապկի օձիք դառնալու համար։ Այս ընծան լայն ծալուած՝ դրուեցաւ նոր մկրտուած երեխայի բարուրի երեսին, որպէս զի ամենեքեան տեսնեն և դովին կնքահօր առատաձեռնութիւնը։ Սովորաբար, որ քան սաւանը թանգագին է լինում, կնքահայրն աւելի վըստահօրէն է նայում ժամաւորների, փողոցով անցնողների և մանաւանդ կննքատիրոջ տանը՝ ծննդկանի շուրջը բոլորած կննքանաշի հրաւիրուած կանանց երեսներին։

Ես չսպասեցի պատարագի վերջանալուն. նախապատրաստուած հօրբոյր նղանիդ, շտապեցի տեղ բռնել ծննդկանի մօտ՝ տան հանդէսը տեսնելու։ Միայն ես չէի ժամի վերջանալուն չսպասողը յետ նայեցի, տեսայ որ ժամաւորը բոլորը դուրս եկան։ Մի պախարակելի սովորութիւն կայ գիւղերումը. հէնց որ նշխարը մանրւում և բաշխւում է ժամաւորներին, ամէնքն առնում են մասը և

գուրս գալի, իսկ այդ կատարւում է ժամն իսպառ չը-  
մերջացած։

Ծրդէն եկեղեցու բակի դուռը կտրած՝ կանգնած էին  
երկու երիտասարդ, նրանցից մինը դուրս եկող ժա-  
մաւրին էր հրաւիրում կննքատուն, միւսը մատով նդ-  
սանենց տան ճանապարհն էր ցոյց տալիս հակառակ  
կողմը թեքուել կամեցող ձեացողին։ Իրավէս՝ թեքուող  
շատ րիշ եղաւ, ոչ ոք հրաւէրը չըմերժեց։ Բոլորեքեան  
ժողովեցան եկեղեցու առաջի հրավարակը։ Այստեղ սպա-  
սելու էին ամէնքը, եւ երբ քահանայը շտրջառաւրուած։  
Նրանց ետեից կնքահայրն երեխային գրկած՝ իւղաբերից  
մոմերը երկու ձեռքին վառ, ժամահարն էլ մկրտութեան  
համար տանից տար զրով լիքը բղուղի մէջ այժմ փոխա-  
րէնը մեռնաշօլի լցրած՝ «Ծրեգականն արդարութեան»  
շարականն երգելով ուղղուեցին գէպի կննքատուն, ժամա-  
ւորները բոլորեքեան գլխարաց հետեւեցին թարօրին՝ կը-  
նլնքանաշ վայելելու։

Ես վաղուց նստած էի ծննդկանի սենեկում, շուրջա  
խմբուած էին հրաւիրեալ կանայքը, հարսներն և առ հա-  
սարակ իգական սեռի բոլոր ներկայացուցիչները։

Եղսան հօրքուրի ասութեամբ այնտեղ պիտի լինէր  
միայն նորամանուկի հայրը և ամենաշատը՝ պապը. ուրիշ  
տղամարդ իրաւունք չունէր նուրիրական սրբարանի առաս-  
տաղի տակ մտնել, ուր խմբուած էին պառաւ և նորա-  
տի գեղեցիկ սեռը։ Միակ բացառութիւնն իբրև օտարա-  
ցի թանգադին հիւր՝ ես էի լինելու։

Ուղիղ էր, այնտեղ էր մկրտեալի հայրը—Գէորգը,  
նա կանգնած էր դրան առաջին և սպասում էր թարօրին։  
Բայց, որքան աշքս շուրջ ածեցի, շրտեսայ հետաքըրու-  
թեանս առարկայ պ. Կարապետին, որի հետ ծանօթա-  
նալու զերմ ցանկութիւնը վառել էր մէջս պառաւ նղսանը։  
Սմենեքեան ոտքի ելանք և տեղ բաց արինք. թա-

բօրն արդէն ներսն է։ Ճարականը դադարեց, երբ կնքահայրը նոր մկրտեալը ձեռքին մօտեցաւ ծննդկանին։ Վերջինս գլխի թանձը քողը մինչև կուրծքը ցած թողած՝ իւրամենայն արդուզարդով պճնուած՝ ծածկած երեսով նըստած էր գետնի վրայ փոռւած անկողնի մէջ՝ թոնրի վերի կողմբ։

Կնքահայրը չորեց սանամօր առջել և երեխային մեկնեց մօրը։

Ծննդկանը առաւ նորամանուկը, դրեց գոգը վերմակի վրայ, կուացաւ, համբուրեց և թերուեց դէսլի մօտն տպասող կնքահայրը, բռնեց նրա շուխայի փէշը և մօտեցրեց շրթունքներին։ Ապա՝ կնքահօր ձեռքից առաւ երկու խւղաքերներից մինը։ Միւս մոմք ինքը կնքահայրը բռնեց, մինչև բահանայք տան կարգը վերջացրին։ Տէրտէրը խաչպարդ մաշտոցը դրեց երեխայի բարուրի վրայ և հրաւիրեց ամէնքին մօտ զալ, համբուրել և լիուլի աջահամբոյր ձգել։

Ամենից առաջ, ըստ օրինի, մօտեցաւ նորածնի հայրը, համբուրեց և երկու մանէթ աջահամբոյր դրեց։

Տէրտէրի աշքերը չորս բացուեցին՝ մկրտութեան ամենաշատ հասոյթը 40 կոպէկից մինչև մի մանէթ է լինում, իսկ այժմ կրկնապատիկն էր։

— Աստուած օրհնեսցէ, մնացական զաւակ արասցէ, աիրելի Գէնրգ, իւր սրտալիր օրհնութիւնն ուղղեց տէրտէրը։

— Անունն ինչ դրիբ, տէր հայր, առաջին ամենաէական հարցը տուեց մանկան հայրը։

— Ես կնքահօրը հարցըի, պատասխանեց տէրտէրը, անուն գնելու իրաւոնքը կնքահօրն է, իսկ սա իր իրաւունքն ինձ յանձնեց։ Ես էլ՝ երեկ մեր Ցրդատ Ժագաւոքի ու Աշխէն տիկնոջ տօննն էր, անունը դրի Ցրդատ. բարիլ մի աղջիկ էլ ունենաս, նրա անունն էլ Աշխէն դնենք։

— Փառաւորի՞ս։

Երկրորդը համբուրեց ինքը կնքահայրը և դրեց մաշ-

տոցի վրայ դարձեալ երկու մանէթ:

— Զօրանաս, զիրկդ միշտ լիքը լինի, աղայ կնքահայր, ուրախութիւնից հրճուեալ օրհնեց տէրտէրն և աւելացրեց՝

— Այսօր այս տան մէջ մի բարի հրեշտակ կայ, նրա հովանաւորութիւնն է մեր պլոխն սփռում:

— Տէր հօր ակնարկած հրեշտակը հասկանալով իւր հասցէին շեշտած հաճոյախօսութիւնը հեգնաժպիտ մօտ եկաւ մաշտոցին և մանէթանոց թղթադրամի տակ զգուշութեամբ թագցրեց իւր աջահամբոյրը:

Կարծեմ, դուք էլ ինձ հետ հասկացաք, թէ նւմ զըլխատակն էր դրում տէր հօր փափուկ բարձը. ինչ պիտի անէի. ունես՝ չունես՝ հարկաւոր տեղում չը պիտի խընայիս. հաղինս նոր ու մաքուր շորեր՝ ինքս պաշտօնեայ, տէրտէրն ու ժողովուրդն ինչ կը մտածէին, թէ զրպանումն միներ են պարում և ես աջահամբոյր տուի վերջին դրամս:

Սուր էր Աստուծոյ աշալուրջ հովուի տեսանելիքը, արտաքուստ փուռած մանէթանոցը նրա աչքումը ապակու թափանցկութիւն սուացաւ:

— Աստուած օրհնեսցէ քեզ, մեր սիրելի աղայ պարոն, արածդ հասկացայ, հրամանքդ Քրիստոսի պատուէրը կատարեցիր. «մի զիտացէ ձախ քո, զինչ զործէ ազ քո»: Բայց դու իմ իրաւունքը չես կարող խլել, ես ուզում եմ իմ օրհնեալ ժողովրդին մեր պարոն աղայի առատաձեռնութիւնը ցոյց տալ. բարի օրինակին բարի մարդկի պարտական են հետեիլ, ասաց և կռացաւ քահանան ու թըղթագրամի տակից դուրս հանեց վերջին պօլիմպերեալս, պտղունցի մէջ ծայրից բռնեց ու վեր բարձրացնելով՝ գոչեց.

— Աստուած այսպէս փոխարէնը քեզ հատուցանէ, մեր դիւղի պարծանքս, աղայ պարոն, և շարունակեց.—

«և չայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս»։ Բոլոր կանանց մէջ քշփշոյն ընկաւ, ամէնքն երանի տուին ծննդկանին, որ էսպէս բաղդաւոր եղաւ իր առջինեկի կնունքը։

— Աղջի Գայեան, վախում էին անկիւնում երկու նորատի հարսներ. կարեմ բաղդ բաժանողի աշբերը. Փարմասոնի աղջկանն էսպէս բաղդ, տեսնում ես սաւանը, կարմիր զանառուզ է, հաւատաս՝ հինգ մանէթ նստած լինի. զանին մատաղ էդպէս կնքաւորի. իմ ցեխ չորացնող կընքաւորիցն էր կտրուել էս մարդութիւնը, ասում են՝ իրանց մարագը շինելիս՝ մի տոպրակ սրսուռ, հին ոսկի է գտել. թող կոլիսի աշքն էն ճար կտրածը. (մեղայ, մեղայ, սանամէր եմ, մեռոն է տունս բերել, անիծելու իրաւունք չունիմ), չամանչեց մի հասարակ խամ մուշասիմ գլխի ծածկոց սաւան բերեց, մի անպէտք ու փթած փալասի կտոնի եմ ասում, որ եթէ ուզենաս քո հացթուլիս պառաւին ընծայ տալ, գլխովդ կըտայ, խմորդ կիսատ գնտած կըթողի, փէշը թափ կըտայ ու վառած թունդրի շըրթնիցը վեր կը կենայ։

**Մօտեցաւ Եղան տատը ու մի սպիտակ փոշեթաթախ ապասանոց էլ նա դրեց խաչի վրայ։**

Օյնուհետև համբուրելու եկան ուրիշներն և շարունակեցին սովորական պղնձեայ սև դրամները։

Մինչ քահանան գեռ ես հրաւէր էր կարգում «խաթուն մայրերին, քոյրերին ու դուստրներին» մօտենալ սուրբ խաչը համբուրելու և ազահամբոյր ձգելու, ես բըռնեցի Եղան հօրքուրի ձեռքը և հեռացայ մութն անկիւնը։ Այնտեղից էր, որ ակամայից ներկայ գտնուեցայ վերոպքեալ նորատի հարսների մտերմական գաղտնախօսութեանը։

— Եղան հօրքից, հարցրի, ուր է քո խնամիդ, ոչ ժամումը տեսայ և ոչ այստեղ. քո ասելով նա այժմ իւր

դստեր մօտ կանգնած պիտի լինէր:

— Կրնմ նրա գլուխը, երկու ձեռքով դէպի դուռը մատները լայնացրած՝ չանչեց պառաւը. ընշանը կնունքը գալն էստեղ վէր սատկած էր. հէնց որ լսեց, թէ կնունքը բագի դուռն է հասել, փորը սատանայ ընկաւ, սևացաւ, նեռը դառաւ ու շշկուած՝ դռնէդնաւ. Ծչքը դուրս եկաւ, շփոթուելուց՝ ճակատը հէնց կպաւ դրան վերին քարէ շեմքին, որ խելքամազ եղաւ, վէր էր ընկնում. մաշկի մի հատն էլ ոտիցը թռաւ, ին գիտինը խորտակուելուն հէնց որ տեսաւ, թէ բագի դուռը բացուեց, տէրտէրի գլուխը քուչումն երևաց, մաշիկը մոռացաւ, մի ոտնանի փախսաւ կտուրը. ինչ է՝ թէ իր կուրանալու աշքովը սուրբ մեռոնը շըտեսնի. նոր՝ բամակիցը Գէորգն է մաշկի հատը տարել, իրան տուել:

— Անպատճառ ինձ հարկաւոր է ծանօթանալ այդ օտարոտի մարդի հետ, մտքումս որոճացի ես և քահանա. Ների հրաւիրանօք նրանց հետ միասին թողի ծննդիկանի սենեակը և գնացի մեծ գլխատունը, ուր արական սեռի բազմականներն էին:

## Ե.

Հիւրերը բոլոր նստոտած՝ սպասում էին ամենայարգելի հիւրերին: Քահանային ու կնքահային էին նրանք: 10—15 րոպէ գիւղական հասարակութիւնը միատեղ ժողոված լինի և աղաղակ չբարձրանայ, այդ լսուած ու տեսնուած բան չէ. Գիւղացիք առհասարակ ցած խօսելու մասին գաղափար չունին. իւրաքանչիւր գեղջուկի բերանից մի բառ բաւական էր, որ օտարականը կարծէր, թէ ժողովականներն իրար գլուխ են կոծոտում. բայց տեղացին շատ հեռաւոր տարածութիւնից հաստատապէս կըվճռէր, թէ կոռուի, ուրախութեան, սգի, թէ կատակի խառնիճաղանճ

ձայներ են լուսածները:

Իմ զարմացած հարցին, տէրտէրը դեռ ներս չը մտած՝ պատասխանեց.

— Ինչ որ անմեղ հանարներ են, երեխ մէկի վրայ ծիծագում են:

— Զասացի, ներս մտած բավէին կողքիս հրեց և կամաց շշնչաց ականջումս քահանան ու մատնացոյց արեց վերի կողմում, պատուաւոր տեղում նստած անձին:

Գլուխը կախ, լուռ նստած մարդը ծննդկանի հայր պլ. Կարապետն էր:

Պատուաւոր հիւրերս ներս մտնելուն պէօ՛ ամենքը ոտքի կանգեցին:

(Միջանկեալ իմացէր, որ և ես պատուաւորների շարքումն էի):

— Բարի ողջոյն, սիրելիք, ասացին քահանայրը և կը-ռացանց իրանց մաշիկները ձեռքներն առան ու անցան վերի, աղատ խողած տեղը:

Աւագ քահանան ինձ վեր հրաւիրելով՝ դարձեալ ա-կանջումս շշնչաց.

— Նկատնմ ես, աղայ պարհն, այդ հոգեսորին, բոլորը ոտքի են կանգնած, իսկ դա մեր ներս մտած ժամանակ՝ ծունկը քիչ տեղիցը շարժեց ու էլ յետ պինդ նստեց: Տեսնմ ես, մեր պատճառով քո դէմ էլ անքաղաքավարի գտնուեց. իրան անսլատուովթիւն և ստորութիւն է համարում, հայ քահանայի առաջին ոտքի կանգ. նել, ախար, ոչ բարհվ, ինքն էլ քահանայ է:

Տէրտէրներն իրանց մաշիկները դրին փռուածքի տակ և վրան նստեցին, որ ճաշի վերցին՝ որոնելու հարկ չը մնայ, այդպէս էին վարուել ամէն մաշկաւորներն ու տրեխաւորները, իսկ շաքմէք կամ եւրոպական կօշկաւորները հետզհետէ քանդում են կօշիկ հանելու նահապետա-կան սովորութիւնը: Կնքահօր տեղը յատկապէս քահանա-

յից ազ կողմն էր որոշած։ Իմ համար թողուած էր կընքահօր և ծննդկանի հօր միջեր։

Երկու պատճառաւ պլ. Կարապետը բազմացրած էր հասարակութեան տանուտէրից վեր։ Նախ՝ նա խնամի էր, նորամանումի պապն էր, առանձին պատուի արժանի էր։ Երկրորդ՝ օտարական էր, ուստի և ամենայն իրաւամբ՝ ընդհանուրի յարգանքին արժանի։ Երր պլ. Կարապետը ներս է գալիս, հասարակութեան տանուտէրն ինքն է վեր կենում տեղից, յառաջ գնում, բռնում «աղա խնամու» ձեռքից և նստացնում իւր գլխավերելը՝ ասելով։

— Բարի հազար բարի, խնամի աղայ Կարապետ։

Նոյն ողջոյնները կրկնում են ամէն կսղմից։

Պ. Կարապետը գլուխ է իջեցրել հասարակութեանը և լուռ նստել։

Ծյգպէս է մեր աշխարհի սովորութիւնը. արիմարքու թշնամիդ էլ, եթէ հիւր անունով ծածկիդ տակ մըտաւ, զլիմիդ վրայ տեղ ունի, մանաւանդ՝ եթէ նա օտարացի է։

— Դէհ, շնւտ, դէհ, բերէք, ձայն տուեց տանուտէրը բահանաների նստոտելուց յետոյ, ես գործ ունիմ, եասաւուլ է եկել, մեծաւորի համար գինի պիտի զրկեմ. եասաւուլ մաշաղի չասանը երեք անգամ պատարագի ժամանակ ետելիցս մարդ է զրկել. ասել եմ՝ գնացէք սուտ փշեցէք, թէ ժամումը չէր, ման ենք գալիս, չենք գըտնում. հրամայել եմ, որ լաւ պատիւ տան, պատուատրաք անեն։

— Հուտ արէք, բերէք, հաց բաշեցէք, ձայն տուեց բազմութեան միջից պատուելի իշխաններից մէկը՝ հանրապատիւ, ամենահռչակ, զուարճախօս մէլիք-Բաղալը, մենք, գլուխը բարը, տանու մարդիկ ենք, «աանու տէրտէրին օրնինեա տէր չը կայ», բայց էստեղ մեզանից աւելի պատուատր հիւր կայ, նա սոված կը լինի։

—Թէ մեր պարոն աղայի համար ես ասում, մէլիք-Բաղալ, միջամտեց շարաճնի Աղալօն, դա մեր մեծ եղբայրն է, ինքը զուլուղի մարդ է (պաշտօնեայ է) իսկ ծառայողներն, առում են, մինչև արեք իրիկնադէմ բարդի ծառի շափ կախ շընկնի Մասիսի գլխին, հաց չեն ուտիլ:

Այ տղայ, Աստուած մեր աղայ պարոնի կեանքն երկար անի, պատասխանեց մէլիք-Բագալը, դա մնդանից, մեր հող ու ջրիցն է, մեր ընկեր հարեանն է, դա չի նեղանալ, իմ խօսրս մեր խնամի պ. Կարապետի մասին է, որ հիմի տէր Կիրիսկինտոս է դառել ու իր առջինեկ թոռան մեռնը համբուրելու համար իր ժողովրդին որբ է թողել:

—Մէլիք-Բաղալ, սաստկանօք շեշտեց բարձրաձայն աւագ քահանան, համեստ եղիր,

—Ներողութիւն, տէրտէր ջան, պատասխանեց մէլիքը, մենք ենք անտաշ ու անհասկացող ու չենք հասկանում, թէ պապերի հաւատը որ կայ՝ փթած ու մաշուած արխալզահին է դառել, հին մարդկանց դրախտն, ասում են, Մուրատ շայը (Եփրատ գետը) վարարել է ու քշել, սրբել, տարել ծովն ածել, հիմի նոր հաւատ է դուրս եկել, նոր դրախտ է տնկուել, հաղար տեսակ ալվան ծաղիկներ են մէջը բացուել, նոր արդարների հոգիրը գիշեր ցերեկ ծաղկների հոտով զմայլում են ու ուրախանում, իսկ ով որ հին հաւատի մէջ մոլորուած մնում է, նրանց համար ոչ դրախտումը տեղ կայ, ոչ դժուխքումը:

—Խոհեմ եղիր, մէլիք Բագալ, կրկնեց աւագ քահանան:

—Խաթրիդ չը դիպչի, աջիդ մեռնեմ, ասում են հիմի ֆարազին պատիւ չունի, խոր նոշխարհների տէրտէրներն անմիրուր ու անֆարազայ են. էնտեղ իրանց աէրտէրներին պարոն են կանչում. Այ, տեսնում ես մեր

պ. Կարապետը, ինքը մեր երկրի ճուտ է, բայց նոր աշ-խարհից եկած անֆարազայ տէրտէրների հետ է նիստ ու ել անում ու էսօր էլ քահանայ է՝ որ կայ ու «Կարա-պետ» աւաղանի փթած անոնը փոխել է, Կիրիսկինտոս է դրել չծ գիտէր՝ ով էր Կիրիսկինտոսը, մի քաղաքա-վարի, լուսաւորուած պատուառը ժողովրդի սարկաւագն էր։

—Մաղագործներին, մէլիք. Բադալ, ձայն տուեց Ա-դալօն։

—Հա, հինց, ասենք՝ մաղագործ բօշէքանց սարկա-ւագն էր Կիրիսկինտոսը, ինչ պակաս էր, բօշէքն Աստծու ստեղծած չե՞ն, հեզնեց մէլիք Բադալն և դարձաւ պ. Կարապետին։

—Երաւ, լաւ միտքս եկաւ, տէր Կիրիսկինտոս հայր, սպարօն Կարապետ, ձեր մեռոնն ինչ գոյն ունի։

—Եթէ պարզ զրի զոյն էլ ունենայ, վերջապէս ստի-պուեց մի կծու պատասխան ուղղել խնամի Կարապետը մէլիք Բադալին, քո աշքումը՝ կամ դեղին, կամ կարմիր կերեայ։

—Լաւ ասաց լաւ ասաց, տեղին էր, մէլիք Բա-դալ, միջամտեց տանուտէրը։

—Ես չեմ ուրանում, որ գինի խմել սիրում եմ ու տէր Կիրիսկինտոսը շատ տեղին կպցրեց իր գիւլլէն. ես իմ տղէրանցը կտակ պիտի անեմ, որ էն դեղին ու կարմ-րից ամէն հինգ նաւակատիկի մի մի կարաս իմ փոխա-րէն խմացնեն աղքատների ու գիւղումը գտնուած օտա-րականների։ Այ, թող պարօն Կարապետը—խաթրը չը մնայ՝ տէր Կիրիսկինտոսը եկող ամառ՝ Վարդավառի նա-ւակատիկին՝ գայ մեր գիւղը, էն ժամանակն ես մեռած կը լինիմ, իմ տղէրը մեր կարմիր գինուցն իրան անուշ անել կը տան, տես կը հաւանի, թէ չէ։

—Դէս, շուտ արէք, հացը քաշեցէք, թէ չէ մեր մէլիքն իր ալանի ալանի հանաքներովը ախորժակներս

կապից, նորից ձայն տուեց տանուտաէրը:

Առհասարակ հարկինքների ժամանակ՝ հիւրերը նըստաւմ են երկու կարգի՝ իրարու հանդէպ. մի դազ ու կէստարածութիւն է թուղւամ երկու կարգի մէջը:

Այդ բաց, երկար ու ձիգ ընդարձակութեան մէջ սպասաւրները տարածեցին սփռոցները. Կատոյտ կտաւիլ վրայ նկարուած են պինակիներ, զինու գաւեր, բաժակներ (այժմ և դանակ ու պատառաքաղներ) և Սազմոսի փառարանական տներ. Խրաքանչիւր բազմականի առաջ դրւում է մի մի մեծադիր բառածալ թրջած լաւաշ հաց, մօտը պանիր ու բողի. Աղ ու որդպեղը հասարակաց է.

— Քինդ հոգուն մի դաւ զինի. ձայն է տալիս որփռացի վրայ գուլղաններով ման հկող սպասաւրը և գինին բաժակի հետ միասին՝ յանձնում նստազներից մէկի հոկտութեանը:

— Քեռի Սահակ, քեզանից մինչեւ սանահէր Ղազարը. Էս ձեր դաւն ու թամն է, Սիմոն ափուն մէջ տեղ է նըստած, թող դա լի նեղութիւն բաշի, ածի, խմացնի. Ըստուած սիրողը խնայողութիւն չանի, մեղրից բաղցր, արինից կարմիր հինգ գինու կարասի բերանների ծեփերն իմ ձեռովկս եմ պոկոտել, բանի կարող էր՝ վայելցէք, ուրախ ուրախ աւետիր է տալիս սպասաւրը:

— Լաւ է, լաւ, զլուխ մի տանիլ, տնօրինեց տանուտէրը, ամէն մարդ իր ընկերը կը գտնի, դուք կերակըրները բերէք. Նա դարձաւ քահանային. տէր հայր, գործդ տես:

Քահանան ոտքի ելաւ և հացն սկսեց օրհնել. ամէնը վեր կացան, միայն պ. Կարապետն էր, որ շատ ծանր և տհաճութեամբ ստիպուեց ոտքի ելնել՝ անշուշտ՝ գայթակղութիւնից խոյս տալու նպատակսվ. բայց և այնպէս՝ նա երեսը չըխաչակնքեց:

Խոհեմ վարուեց աւագ քահանան. նա ժամանակ չը

տուեց ժողովրդին քըթմնջելու, կամ նկատողութիւններ անելու, բարձր ձայնով գոչեց

— Սստուած նորամանուկը շնորհաւոր անի, հաց ա-նուշ արէր, օրհնեալ լինէր:

Եյդ խօսրը գիւթական ազդեցութիւն գործեց, ա-մէնրի սեղանատամները ոկսեցին գործել:

Կերակուրները, համարեա, սակաւ բացառութեամբ, ամէն տեղ սովորական են: Նախ՝ բերին տժվժիկը, կամ պղնձի խորովածը, ուրիշ խօսրով իւղի մէջ տապակած և սովորվ բոված միտ:

— Լաւաշ պատրաստեցէք, ձայն էր տալիս սպասա-ւորը և ձեռնաշափ լաւաշի վրայ մի կամ երկու գրգալ այդ տապակածից զնում ամէն մի բաղմականի համար:

Սպա իւր պղնձեայ մաքուր կլայեկած պղնակիների մէջ տուին բողբաշը. — Երկու մարդին մի աման, ձայն էր տա-լիս սպասաւորը և ջրալի համեղ կերակուրը միւս ոպա-սաւորի ուսին գրուած երկայն, փայտեայ խոնչի (սկուտղ) միջից վերցնում, շարում հիւրերի տռաջը. Նոյն կարդով քօղքաշին հետեւց կաղամբով տօլման, իսկ ամենից վերջնականը՝ Փլաւը:

Սեղանը կառավարում էր մեծ տէրտէրը: Առաջին բաժակը՝ քօղքաշի ժամանակ՝ քահանան առաջարկեց կըն-քահօր, սանի և սանամօր կինացը: Կննքաճաշին՝ այդ ե-րեք կենացը միասին անբաժան պիտի խմուի. ամենքից յարգին և նուիրականներն այսօր նորամանուկը, ծննդ-կանն ու կնրահայրն են, որոնց միացրել է «մեռնի» շնորհքը: Իսկ զաւակի հայր տան գլուխը, այսօր երկրոր-դական, երրորդական, նոյն իսկ վերջնական տեղ է բըռ-նում. շատ անզամ է պատահում, որ նորամանուկի հօր կենաց բաժակը մոռացւում է:

Տօլմէն քաշելուս՝ քահանան առաջարկեց երկրորդ բաժակը, որ էր ծննդկանի մերձաւոր և հեռաւոր բա-

բեկամների և աղքականների կենացը, որոնց գլխաւոր ներկայացուցիչը ծննդկանի հայրը, նորամանուկի պապը պ. Կարապետն ինքն էր:

—Պ. Կարապետին բաժակ տուէր, տնօրինեց սեղանի կառավարիչ տէրտէրը, թող չնորհակալութիւն անի:

Պարոն Կարապետը բաժակը ձեռքն առաւ, համեստօրէն, լուսութեամբ, ընդհանուր գլուխ տուեց և ցած զրեց: Ի պատիւ պարոն Կարապետի պիտի ասել, որ նա բնաւ գինի բնրանը շառաւ սեղանի վրայ:

Փլափի վրայ տէրտէրն առաջարկեց իւրեանց գիւղի հիմքը հաստատմանալու և հասարակութեան կենացը:

Սովորական կարգից գուրո՞ւ մամնաւորապէս խմուեցաւ և իմ կենացը, այդ մի բացառիկ պատիւ է, որ մատուցում է հազուադէպ միջոցներում:

Փլափի վերջերքին՝ քահանան հրամայեց սպասաւորներին բերել կնքահօր պատիւը:

Մի պղնձեայ բալորակ սկսուտղի վրայ սպասաւորը բերեց մի հաստ ձուաղեղ և գնելով կնքահօր առաջն ասաց.

—Աղայ կնքաւորի, էս էլ ձեր պատիւը:

—Մեծ տէրտէրին համեցէք արա, աչքով ցոյց տուեց կնքահայրը:

Սպասաւորը վերցրեց ձուաղեղը, մօտ տարաւ քահանային, Վերջինս խաչակնքեց խորտիկը և հրամայեց.

—Դիր կնքաւորի առաջը:

Մանրեց կնքահայրն իւր ձեռքով ձուաղեղը և նորից ուղարկեց մեծ տէրտէրին:

Քահանան մի կտոր ինքը վերցրեց, մի կտոր իւր ընկեր քահանայի լաւաշի վրայ դրեց, մնացածը խաչակնքելով՝ դարձրեց կնքահօրը:

Մի պատառ բերանը գնելուց յետոյ՝ կնքահայրը ձուաղեղն առաջարկեց ինձ, պարոն Կարապետին և պատուելի հիւրերին՝ գլխաւորապէս՝ գինի չըխմողներին:

Պարոն Կարապետը մերժեց ձուազեղը:

—Քաւոր աղայ, ձայն տուեց մէլիք Բաղալը, երբ ձուազեղի սկուտովն իւր առաջն եկաւ. ես կարմիր ու դեղին մեռնով փորս տիկ եմ շինել, ձուազեղի տեղ չը կայ. իմ բաժինն էլ մեր խնամի պարոն Կարապետին—մեղայ, մեղայ, տէր Կիրիովինտոսին թաւազայ արա. դա իր նորակնունք թոռան խաթեր՝ պասն էսօր է բաց արել. ախար գիտես. դա զարթնէ նախնադիր մեծ պասը, տարին երեք հետ մեծ պաս է պահում, հոգու ճանապարհը գտել է:

—Ես լսել եմ, որ պարոն Կարապետն ուխտաւոր է, սուրբ Կարապետի եօթը շարթուայ պասն անխախտիլ է պահում, ձայն տուեց միւս կողմից մէլիքից ոչ պակաս կատակարան Աղալօն:

—Ճեր փէշին ծունը դնելու է, իւր կողմից կատակի կապեց պարոն Կարապետը. թէ դու մէլիք ու թէ Աղալօն՝ երկուսդ էլ էնքան պաս էք պահել, որ շատ ձէթ ուտելուց՝ Աղալօյի ձայնը մանրատոտիկ գազարակերի է նմանել, իսկ մէլիք Բաղալի կոկորդի ծակը նեղացել է, փորի պատերն իրար են կպել, բժիշկներն արադ են դեղ ասել, որ օրը մի մատնոց խմի, առողջանայ:

—Լաւ ասաց, լաւ ասաց, սնէր էր, կատակն անրաւականութիւնի չը հասցնելու նպատակով՝ ձայն տուեց տանուտէրը:

Մինչ այս, մինչ այն՝ ձուազեղի սկուտով ճանապարհորդեց բոլոր հիւրերի մօտ և վերաղարձաւ տիրոջը. շատ քշերը մասնաւորուեցին, բոլորեքեան չնորհակալութիւն արին և չը վերցրին:

Երկրորդ անգամ կնքահայրը պարզութեամբ ձուազեղն առաջարկեց պ. Կարապետին. Վերջինս նորից գլուխ իշեցրեց և մերժեց:

—Վերկալ էլի, պարոն Կարապետ, ձայն տուեց մէմբը. ընչի՞ չես ուտում:

— Իմ կամքս չի, ուղենամ՝ կուտեմ, բայց չեմ ու-  
ղում, ախորժակ չունեմ:

— Վայ թէ խեղճ կնրաւորին էլ բաժին չը ժողա-  
յիր, սպատասխանեց մէլիքը, բայց փառաւորի մեծ տէր-  
տէրը, խաչակնքեց, ատամներդ կապեց, ոնց որ նախրից  
մոլոր ընկած տաւարի համար կովատէրերը պառաւներին  
գէլկապ են անել տալիս, աղօթում են, որ գայերի ա-  
տամները կծկուի չը կարողանան էն դիշերը դաշտումը  
մնացած տաւարին մօտ գնալ:

— Ընչի ես հոգուդ մեղք անում, մէլիր Բաղալ, ա-  
սաց Աղալօն, մեր պ. Կարապետը խաչակնքելուց ընչի  
պիտի վախենար, հօ խաչը դրա հօրը չի սպանել:

Նկատելով որ սրախօսութիւններից անտխորժ հե-  
տեանքներ կաբոզ են առաջ գալ, ես աշքով ակնարկ արի  
Քահանային՝ կոչոնքին վերջ տալու:

— Սիրելի Ժողովներդ, գոչեց տէրտէրը, «Հոգի առա-  
մել է քան զմարմին» բաժակներդ լցրէք, մի ողորմաթաս  
էլ խմենք ու վերկենանք. Աստուած լուսաւորեսցէ՝ հա-  
մայն հաւատացեալ րրիստոնէից ննջեցելոց հոգուն, մեր  
գիւղի բոլոր հանգուցեալների հոգուն և մանաւանդ մեր  
սիրելի Գէորգենց հին և նոր ննջեցելոց հոգուն. Տէր լու-  
սաւորեսցէ, ասացէք ամէն...

— Ինչ որ տէրտէրն ասաց, Ժող Աստուած լսող կա-  
տարող լինի, ողորմի Աղամայ դէսը բոլոր մեռածների  
հոգուն, Գէորգենց պապ ու տատերի հոգուն, բարի յի-  
շատակ մնայ Գէորգը, կրկնեցին ամէնը և բաժակները  
դատարկեցին:

Ժամկոչն արդէն բուրվառի մէջ կրակ ու խոնկ գը-  
րած յանձնել էր տիրացուին:

Քահանայիրը վեր կացան, շուրջառաւորուեցին, երգա-  
սացութեամբ և «աղանդանիչով» սեղանն օրհնեցին:

Ժողովրդի ոտքի կանգնելու իրարանցումի ժամանակ՝

պ. Կարապետը յաջող միջոց դտաւ դուրս ծլկուելու։  
—Թուչունը թռաւ, մէլիք Բագալ, ձայն տուին շա-  
տերը։

—Հիմի թող գնայ, կերածը մարսի, փառչ փշանա-  
լու, վշտացած պատասխանեց լրջօրէն մէլիքը, Լուսաւ-  
րիչն աշրը հանել էր՝ գնացել է լոթուանգներին է եր-  
կըրպազութիւն տալիս. ինչ արած՝ արել վատ տեղն է  
մթնել, թէ չէ ես հերիք եմ էդ ֆարմասոնների բոլորի  
հոգին հանելու... էհ, միշտ հօ էսպէս մեալու չենք. հաշ-  
քա՛թ մի օր մեր դրանն էլ հարսանիքի ձէն վեր կլինի։

—Կեանրդ երկար լինի, մէլիք Բագալ, ապրիս Աղա-  
լօ, լաւ լուացիք, սրտի փղձուկն արտայայտեց տէրտէրը,  
թէ մարդ էր՝ կը հասկանար. ասած է. «Հասկացողին  
մին, անհասկացողին հազար»։

Հիւրերը չնորհակալութիւն արին, գնացին, կնունքը  
վերջացաւ.

### Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Երկու օր մնաց պ. Կարապետը իւր գստերի տանրւ  
Պառաւ եղսանի միջոցով, փեսայի ձեռքով տասն անգամ  
հրաւիրեցի սենեակս. Չեղաւ, չեկաւ. Գնալու նախընթաց  
երեկոյին՝ խոստանում է հետևեալ առաւօտն ինձ այցե-  
լել. Բոլորին խարել էր. Լոյսը բացւում է, ամենրը վեր  
են կենում, չըկայ։

Ծառայի ասութեամբ՝ արշալուսին է ձին հեծել ու  
ճանապարհ ընկել։

Բայց պ. Կարապետն իմ ձեռքից իսպառ չաղատուեց.  
Վերջը մենք հանդիպեցանք, բարեկամացանք և հասարա-  
կական գործում միասին աշխատեցինք։

Մեր աշխատանքն երկու կողմից պսակուած կըլինէր,  
եթէ պղտոր զրում ձուկը որսացողներն իրանց ուռկան-

Ները մեզ ընտանի ձեռքով չըփուէին և մեր ականակիտ,  
պլարզորակ վտակը չըպղտորէին:

Վերջ տանր այլաբանութիւններին, եթէ ողջ մնացինք, մի օր մենք կրկին անդամ կրնանդիուղենք Ս. գիւղացի պարոն Կարապետին:

Այն կըկոչուի «Կնունք» յօդուածիս երկրորդ և վերջ-նական մասը:

**ՊԵՐԾ ՊՐՈԾԵԱՆՑ.**

